ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 30 ՏԱՐԻՆ

Արարատի հարթավայրը, հին Շիրակը, Զանգեզուրի (Սյունիքի), Դալարագյազի (Վայոց ձորի) անմատչելի լեռները, Լոռին...— այս անունները միշտ և բոլոր ժամանակներում սրբազան են եղել իր ժողովրդի պատմությունը սիրող ամեն մի հայ մարդու համար: Սրբազան է եղել նույնիսկ այս վայրերի հողը: Եվ դա զարմանալի չէ... Չէ՞ որ այստեղ է գտնվել հայ ժողովրդի օրրանը, այստեղ են ժամանակին աղմկել և ծաղկել նրա բազմամարդ մայրաքաղաքները, այստեղ է ընձյուղել ու զարգացել նրա հին կուլտուրան, այստեղ է հիմնվել նրա Սրբություն Սրբոցը— Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Մարկաբեր ամպերը միշտ էլ կախված են եղել հայ ժողովրդի վրա: Բազմաթիվ անգամներ նա բախվել է ագահ զավթիչների հետ, որոնք մտել են նրա հողը, որպեսզի թալանեն երկիրը, տիրապետեն հայկական բարձրավանդակը և իրենց ձեռքում պահեն Արևմուտքի և Արևելքի միջև ձգվող առևտրական ուղիների բանալին:

Հայ ժողովուրդը, դեռևս իր գոյության արշալույսին, մենամարտել է ասորիների, պարսիկների և հույների հետ: Այնուհետև նրանց փոխարինելու եկան ահեղ հռոմայեցիները, արաբները, ընչաքաղց սելջուկները, մոնղոլները, օսմանցիները: Բազմաթիվ անգամ հայ ժողովուրդը փայլուն հաղթանակներ է տարել թշնամու վրա, բայց մի շարք անգամներ հարկադրված է եղել նաև ենթվել ներխուժած հորդաների ճնշող ուժի առաջ, որը հրի և սրի է մատնել ողջ երկիրը:

Եվ ահա մնացել են բեկորներ և փլատակներ, բեկորներ վաղեմի փառքի և անզորության:

Ուր էլ որ գտնվել է հայ մարդը, նրա հայացքն ու միտքը միշտ էլ հույսով ուղղված են եղել դեպի այստեղ, այս նվիրական երկիրը, ուր ամեն մի քարը հիշողություն է արթնացնում վաղեմի հզորության և հայ ժողովրդին վիճակված բազմաթիվ փորձությունների մասին, ազատության համար մղած բազմաթիվ ճակատամարտերի, հերոս նախնիների փառավոր սխրագործությունների մասին: Եվ Հայրենիքի նկատմամբ եղած այդ մտածումը, այդ թախիծը արտահայտվել է հետևյալ հառաչանքով.

«Գնա՜ս բարով, հա՛յ ուխտավոր,
Երանի՜ քեզ, ա՛յ ուխտավոր,
Որ կարոտով ու սիրառատ
Ուխտ ես գնում դեպ Այրարատ»:

Եվ դարերի ընթացքում համրաքայլ դեպի Այրարատ իրենց սրբավայրերն են շարժվել վշտից և հոգնածությունից կորացած ուխտավորների անվերջ շարանները, շարժվել են մի ավերակից մյուսը, սրբազան մի քարից մյուսը, ջերմ աղոթքով ծունկ են չոքել նրանց առաջ՝ դուրս թափելու կուտակված վիշտն ու թեթևացնելու իրենց սրտի ցավը:

Բայց սփոփիչ ի՞նչ կարող էր գտնել այդ տեղերում թախծող ուխտավորը:

Գուցե և հնասեր մտավորականին տանջել են հնության վեհապանծ բեկորները և նա մխիթարություն է գտել այն գաղափարի մեջ, որ «և մենք ինչ որ ժամանակ հոչակավոր և հզոր ենք եղել»: Բայց հիշողությունը, օթեկ հացի պես, վատ է մեղմացնում այսօրվա քաղցը, վատ է մխիթարում մարդուն:

Գնացել է տանջահար ուխտավորը և անվերջ մխիթարություն է փնտրել հայրենի լեռնաշխարհում: Հիանալի դաշտերը, լեցուն բյուրավոր հոտավետ ծաղիկներով, փաղաքշել են նրա հայացքը: Լեռնային քամին զովացրել է նրա բորբոքված ճակատը, կարկաչահոս առվակները հագեցրել են նրա ծա-

ռավը: Բայց կարո՞ղ էին արդյոք նրանք բերել նրան իսկական մխիթարություն, կարո՞ղ էին արդյոք թեթևացնել նրա դրությունը, դուրս քաշել նրան խեղճության և հարստահարության նորոտ վիճակից, օգնել մոռանալու իր վիշտը:

Շա՞տ է ուրախացել արդյոք աղքատ ու կիսաքաղց գյուղացին այն բանի համար, որ ինչ-որ ժամանակ զենքերը շաչելով այստեղից անցել են հպարտ նախարարները իրենց թիկնապահներով, որ այստեղ ինչ-որ ժամանակ բարձրացած են եղել մեծասքանչ և հարուստ ամրոցներ, աղմկել է կյանքը հին մայրաքաղաքներում:

Չորս բոլորը, նրա ուղու ողջ ընթացքում, կրկնվել են խեղճուկ գյուղերի, ուժասպառ այգիների և դաշտերի, պատռված հագուստներով երեխաների և տաժանելի աշխատանքի նույնանման պատկերները:

Ոխտավորների հակառակ ուղղությամբ շարժվել են մարդկանց այլ շարքեր, որոնք լողել են իրենց և՛ հարազատ օջախները, և՛ հայրենի սրբազան հողը, որը դառն է եղել ու աղի և չի կարողացել իրենց սնուցանել, գնացել են պանդխտության, ծանր և ստորացուցիչ ստրկության՝ մի կտոր հացի համար:

Ո՛չ, հայ ժողովուրդը երբեք դեպի անցյալը չի ուղղել իր երազանքը և հույսերը, նա հիշողություններով չի կերակրվել, այլ առողջ լավատեսությամբ նայել է առաջ և նորից ու նորից անպատասխան աղոթել և հարցրել՝

«Թե ե՞րբ կբացվի պայծառ առավոտ
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում...»:

Արդյոք այդ չէ՞ր հանդիսանում շխամրող այն հույսը, չէ՞ր հանդիսանում այն ջերմ երազանքը, որը վեր է ածվում նախազգացման, չէ՞ր հանդիսանում արդյոք այն բանի հավատքը, որ խավարը չի կարող անվերջ տևել, և շուտ կամ ուշ, որպես պատմական հատուցումն իր բազմադարյան տառապանքների, Մայր Հայրենիքի վրա կբացվի նոր արշալույս և կփայլի ժողովրդական բախտավորության արեգակը:

Եվ, վերջապես, իրականացավ այն, այդ երազանքը. ժողովրդական նախազգացումները չխաբեց նրան:

Հայկական լեռների վրա, Այրարատի հարթավայրի վրա ծագեց ազատության կենսաբեր արեգակը, որը ջերմացրեց բազմաչարչար հայ ժողովրդին, անհաղթահարելի շղթերով ցրեց խավարը և լուսավորեց հանճարեղ ապագայի այնպիսի ուղի, որը երբեք չէր երազել հայ ժողովուրդն իր ամենահամարձակ անուրջների ժամանակ իսկ:

Այդ այն զարթոնքն էր, որը տենչացել էր տառապյալ ժողովուրդը: Այդ լուսապայծառ արշալույսը իրենց դրոշակ երի վրա բերեցին ժողովրդի համար պայքարող համարձակ մարտիկները: Այդ կարմիր արեգակը, որը ջերմացնում և լուսավորում էր երբեմն դժբախտ, սովից, համաճարակից ու կամայականությունից և երկրի անպիտան կառավարողներից իսպառ ազատված ժողովրդին— Սովետական իշխանությունն էր, աշխատավոր ժողովրդի իշխանությունը: Նոր ժամանակաշրջանի պողպատակամք մարդիկ բաց արին հայ ժողովրդի համար ծաղկուն ապագայի դռները, ցույց տվին նրան բռնակալության և շահագործման ստրկությունից, աղքատության և տգիտության ստրկությունից ազատագրվելու միակ ճիշտ ուղին: Հայ ժողովուրդն անմիջապես ձեռնարկեց նոր կյանքի շինարարությանը, որպեսզի ամբողջապես վերածնվի երկիրը՝ սկսելով ամենակարևորից՝ ոռոգումից:

Ինչպես երկար և ծանր հիվանդությունից բժշկվողը տենչանքով է ձգտում դեպի կյանքը, այնպես էլ հայ ժողովուրդը հրճվանքով ձեռնարկեց նոր կյանքը:

Ավերված Հայաստանում անհրաժեշտ էր ամեն ինչ նոր ստեղծել՝ գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, կուլտուրայի օջախները և կարող աշխատողների կադրերը:

Սկսվեց շրջդիատվող աշխատանքի եռուզեռը: Առաջին իսկ օրից կուսական երկրի վրա անհրաժեշտ էր ներդնել այն բոլոր մարդկանց ուժերը, ովքեր սիրում էին իրենց Հայրենիքը, ովքեր ձգտում էին նրան հարություն տալ: Ամբողջ ժողովրդի ընդհանուր ուժերով միայն կարելի էր կատարել այն հսկայական խնդիրները, որոնք էական և անհրաժեշտ էին երկրի համար:

Համատեղ, հնչուն երգերով դուրս եկավ ժողովուրդը ջրանցքներ փորելու, ճանապարհներ անցկացնելու, փոխադրական միջոցները և քաղաքները վերականգնելու աշխատանքներին: Ամեն մի գրագետը գրելկարդալ սովորեցրեց տասնյակ անգրագետների:

Հայ ժողովուրդը, Սովետական Միության բոլոր ժողովուրդների եղբայրական ընտանիքում, հոգատարությամբ շրջապատված, արագ կարողացավ բուժել իր ծանր վերքերը և ամուր ոտքի կանգնեց. նա արագ ի վիճակի գտնվեց սկսել խոշոր վերակառուցողական աշխատանքներ:

Մեկը մյուսի ետևից երկրում անցկացվեցին ժողովրդական աշխատանքով կառուցված ջրանցքների կապույտ երակնե-



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՇԵՆՔԸ

ր՝ Շիրակի, Հոկտեմբերյանի, Ստալինի անվան, Կարենականի, Էջմիածնի, Շահումյանի, Նալբանդյանի, Սիսիանի, Լոռվա, Ադիամանի, Գառնիի, Նորքի, Համբերդի, Ստորին-Զանգուի և շատ ուրիշները: Նրանք երկրով մեկ տարան իրենց կենսատու խոնավությունը, որպեսզի կյանք տան հողի ննջող մասսիվներին, անկենդան լերկ անապատներին:

Կառուցվեցին առաջին ջրմուղ կայանները և ջրամբարները: Ժողովուրդը հանդես եկավ հրաշագործ ստեղծագործողի դերում, և կենդանություն տվեց անկենդան բնության: Եվ շնորհապարտ հողը, ագահաբար ծծելով անմահական ջուրը, առատ վարձահատույց եղավ հողի մշակներին: Դարերով անապատ հողերը ծածկվեցին անսահման ցորենի արտերով, պտուղներով բեռնավորված ծառերի և խաղողի այգիներով, բամբակի, ծխախոտի, շաքարի ճակնդեղի, խորդենու, կերային մշակույթի և բազմամյա խոտի ցանքսերով:

Հայաստանը, որը համարվում էր անհող և ամբողջապես սպառել էր իր հողային պաշարը, Սովետական Իշխանության ստեղծագործ աշխատանքի տարիներին, մեծացրեց իր ցանքադաշտերի տարածությունն ավելի քան հինգ անգամ:

Այսպես, եթե հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը մեծացել է ավելի քան 4 անգամ, ապա բամբակինը մեծացել է 28 անգամ, ծխախոտինը՝ 100 անգամ, կարտոֆիլինը՝ ավելի քան 12 անգամ, խաղողի այգիները՝ ավելի քան 5 անգամ և այլն: Ըստ որում, քանակության աճը ո՛չ միայն զուգակցել, այլև գերազանցել է նաև բերքատվությունը նմանը չտեսնված աճով: Ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը նման հաջողության հասել է միայն կոլխոզային կարգերի հաղթանակի շնորհիվ, երբ հնարավոր դարձավ լայն չափով գյուղատնտեսական աշխատանքներում գործադրել մեքենայացումը և կիրառել նոր ագրոտեխնիկա, որը տարվում է բարձր աստիճանի կուլտուրական մարդկանց ձեռքով, մարդիկ, որոնք աճել են ավելի հարուստ կյանքի պայմաններում: Այժմ կոլխոզային ցանքադաշտերի 86,8 տոկոսը մշակվում է մեքենա-տրակտորային կայանների կողմից նոր սարքավորումով՝ հազարավոր տրակտորների, բարդ հնձող մեքենաների, խուրձ կապող մեքենաների, կալսիչների և այլ մեքենաների միջոցով, իսկ բազմաթիվ գյուղատնտեսական աշխատանքներ էլեկտրիֆիկացված են:

Այդ թվերը և տվյալները խոսքերից ավելի պերճախոս վկայում են կոլխոզնիկների հարստության և բարեկեցության անընդհատ աճի մասին: Եթե ռեսպուբլիկայի կոլխոզների դրամական եկամուտը նախապատերազմական 1941 թվին կազմում էր 224,8 միլիոն ռուբլի, ապա 1948 թվին նա աճել է մինչև 414,8 միլիոն ռուբլու: Այն կոլխոզների թիվը, որոնք ստանում էին միլիոնավոր եկամուտներ, վաղուց անցել է հարյուրից:

Վաղուցհետե անբեր էին համարվում Սևանի ավազանի հողերը, իսկ այժմ վերամշակվել են, նոր ու առաջավոր հիմքի վրա դրվել: Այդ շրջանի գյուղատնտեսությունը տալիս է շլված բարձր եկամուտ: Այս տարի Նոր-Բայազետի բոլոր կոլխոզները մի հեկտարից ստացել են բավականաչափ առատ ցորենի բերք, իսկ «Կարմիր Հոկտեմբեր» կոլխոզը հեկտարից ստացել է մինչև 22 ցենտներ:

Եթե այդքան բարձրացել է կոլխոզնիկների բարեկեցությունը լեռնային դժվարին պայմաններում, ապա այդ ավելի վառ նկատելի է ցածրավայր պտղա-խաղողաբուծական և բամբակագործական շրջաններում: Արտաշատի շրջանի Անաստասավան գյուղի «Փարիզյան կոմունա»յի անվան կոլխոզը այս տարի ստացել է 9 միլիոն ռուբլի եկամուտ, այդ թվում 5 միլիոն խաղողաբուծությունից, 3,5 միլիոն բամբակագործությունից, իսկ 1,5 միլիոն մյուս կուլտուրաներից: Կոլխոզը, բացի առատ մթերքներից, ի վիճակի է եղել տալ յուրաքանչյուր աշխատանքի 43—45 ռուբլի դրամով: Ուստի և ամեն կոլխոզային ընտանիք ո՛չ միայն ապահովվել է ամբողջ տարվա համար անհրաժեշտ մթերքներով, այլ և ստացել է դրամով մի քանի հազար ռուբլի:

Բայց կոլխոզների եկամուտը չի սահմանափակվում միայն հացահատիկից և տեխնիկական կուլտուրաներից ստացված եկամուտով: Հայաստանում գտնվում են հրաշալի ալպյան մարգագետիններ, բնական արոտներ: Բավական է միայն դուրս գալ Երևանից և դուք լեռների երփներանգ փեշերին կտեսնեք բազմաթիվ կոլխոզային հոտեր և նախիրներ:

Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանով նշված են միջոցառումներ ո՛չ միայն մեծացնելու անասունների գլխաքանակը, այլև բարձրացնելու նրանց ազնվացեղությունը, բարձրացնելու ճարպը, քաշը, բուրդը: Կոլխոզնիկները հսկայական խանդավառությամբ դիմավորեցին կառավարության կողմից նշված ձեռնարկումները, որոնք միշտ համընկնում են իրենց՝ կոլխոզնիկների շահերին: Անասնապահության զարգացման պլանը կատարվեց հաջողությամբ: Խնամքի լավագույն մեթոդի, նոր անասնակերերի գործադրության հետևանքով, կոլ-

խոզներում հասարակական հոտի գլխաքանակը նախապատերազմյան շրջանի համեմատությամբ մեծացել է հետևյալ ձևով. խոշոր եղջերավոր անասուններինը՝ 30,6 տոկոսով, կովերինը՝ 70 տոկոսով, ոչխարներինը՝ 80,6 տոկոսով և այլն: Իսկ այդ նշանակում է, որ կոլխոզնիկը քաղաքի բնակչությանն այժմ կարող է ավելի մեծ քանակությամբ բաժին հանել իր տնտեսության արտադրությունից:

Բայց սովետական ժողովրդի համար ամեն մի բարձրացած աստիճան վերջնավարտ



ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԵՐԻՑ ՄԵԿԸ

չէ, այլ մեկնասկիզբ: Այս տարվա մայիս ամսում ընդունվել է հատուկ որոշում՝ Հայաստանի կոլխոզներում հացահատիկի և բամբակի արտադրությունը մեծացնելու և անասնապահության մթերատվությունը բարձրացնելու միջոցառումների վերաբերյալ: Ռեսպուբլիկան իր առջև խնդիր է դրել լիովին ապահովել ռեսպուբլիկայի ողջ բնակչության կարիքները հացահատիկի սեփական բերքով:

Մոտակա 5—6 տարիների ընթացքում հացահատիկի բերքը պիտի կրկնապատկվի ի հաշիվ լավագույն խնամքի, նոր ագրոձեռնարկումների կիրառման և ցանքատարածությունների ընդարձակման: Խիստ պիտի բարձրանա հասարակական անասնապահության գլխաքանակը: Արդեն այս տարվանից իրագործվում է ոռոգման նոր սիստեմի անցումը: Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը պատրաստվում է նոր մեծ թռիչքի, որն արդեն շուտով կտա իր փայլուն արդյունքները: Այդ ձեռնարկության իրագործման համար Միութենական Կառավարությունը ռեսպուբլիկայի կոլխոզներին ցույց է տալիս հսկայական օգնություն:

Սովետական Միության ժողովրդական տնտեսությունը տարվում է պլանային կարգով. ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը զարգանում են հերդաշնակ համաձայնեցված մեկը մյուսի հետ: Գյուղատնտեսությունը ևս զարգացել է ո՛չ միայն արդյունաբերությանը և էներգետիկային համաքայլ, այլ և նրանց աճման բազայի վրա: Այլ կերպ լինել և չէր կարող. գյուղատնտեսությունը ո՛չ միայն հումք է տրամադրում արդյունաբերությանը, այլև օգտվում է նրա արտադրանքից իր վերելքի համար: Այս շարքին են պատկանում, առաջին հերթին, այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսին են Երևանի Մեքենաշինական գործարանը, միկ-

ռոզէսների արտադրությունը, Հանքային պարարտանյութի գործարանը և ուրիշները: Սովետական Հայաստանը խոշոր մեքենաներ, իհարկե, ստացել է նաև եղբայրական ռեսպուբլիկաներից:

Բոլորին հայտնի է, թե ինչ խղճուկ վիճակում էր գտնվում այսպես կոչված «արդյունաբերությունը» նախառևոլյուցիոն Հայաստանում: Բավական է ասել, որ նախառևոլյուցիոն Հայաստանի հետամնաց, ողորմելի արդյունաբերությունը 1919 թվին տալիս էր ժողովրդական եկամտի միայն 10 տոկոսը: Ողջ Հայաստանի արդյունաբերությունը փաստորեն բաղկացած էր պղնձի արդյունաբերությունից և Շուստովի կոնյակի գործարանից: 1913 թվին, որը ամենից ավելի «ծաղկած» տարի է համարվել, Հայաստանը ստացել է ընդամենը 5,6 հազար տոննա պղինձ: Իսկ Շուստովը տարեկան թորել է ընդամենը 4.000 դույլ կոնյակ: Դաշնակների տիրապետության տարիներին պղնձահանքերը քայքայվել էին, հորերը լցվել, իսկ սարքավորումը հափշտակվել: Այդպիսի անկման էր հասել նաև Շուստովի գործարանը և տնայնագործական ողջ արդյունաբերությունը:

Այսպիսով, երիտասարդ ռեսպուբլիկայի երիտասարդ շինարարները անցյալից չժառանգեցին ոչ մի բան, բացի ավերակներից և սկսեցին կառուցել, ճիշտ որակմամբ ասած, մերկ տեղում: Բայց ինչե՞ր չի անում այն աշխատանքը, որը մասսայական խանդավառությամբ է բազմապատկված:

Սովետական Հայաստանի աշխատավորությունը, ստանալով եղբայրական ռեսպուբլիկաների և, առաջին հերթին, ռուս մեծ ժողովրդի ամենօրյա օգնությունը, այնպիսի՛ բուռն տեմպով առաջ շարժեց սոցիալիստական արդյունաբերության շինարարությունը, որ հեքիաթային արագությամբ փոխեց ողջ երկրի դեմքը, ժողովրդական տնտեսության ճյուղերի փոխհարաբերությունը: Հայաստանը դարձավ առաջավոր ինդուստրիալ-ագրարային երկիր:

Սովետական Հայաստանի աճող քաղաքներում ծխացին ծխնելույզները, վեր խոյացան գործարանները: Կառուցվեցին մեքենաշինական և մետաղամշակման այնպիսի գործարաններ, ինչպիսին էլեկտրաշինական, Հաստոցաշինական, Մեքենաշինական, Կոմպրեսորների, Ավտոնորոգման գործարանները՝ Երևանում, Հեծանիվինը՝ Լենինականում, Մեքենաշինականը՝ Կիրովականում և ուրիշները: Նրանք այժմ արտադրում են հսկայական գեներատորներ, տրանսֆորմատորներ, էլեկտրոէներգիայի բաժանման համար ծառայող վահաններ, հզոր կարողության հաստոցներ, էլեկտրալարեր, էլեկտրական ապարատներ, քարահարթող հաստոցներ, գյուղատնտեսական գործիքներ, մսա-կաթնային արդյունաբերության համար սարքավորում սառցարաններ և այլն: Ստալինյան հնգամյակի տարիներին մետաղամշակման արտադրությունն ավելացել է ավելի քան 430 տոկոսով:

Մեծ չափով զարգացել է քիմիական արդյունաբերությունը: Միայն 1932—1940 թվերին նրա արտադրանքը աճել է ավելի քան 35 անգամ:

Միայն վերջին չորս տարում պղնձահանքի հանույթը ավելացել է ավելի քան 50 տոկոսով, իսկ պղնձի արդյունաբերության արտադրանքը՝ ավելի քան 40 տոկոսով:

Եթե անցյալում Հայաստանը տալիս էր միայն անմշակ սև պղինձ, ապա այժմ էլեկտրալուծական գործարանի կառուցմամբ ավարտվում է պղնձի մշակման ողջ պրոցեսը և տալիս է միանգամայն մշակված պատրաստի հումք:

Հայաստանի սննդային արդյունաբերությունը ունի 31 ճյուղ և տալիս է ավելի քան 400 տեսակի արտադրանք: Նա բնակչությանն ապահովում է հացով, ձկի և պտղա-մրգային պահածոներով, շաքարով, գինի-սպիրտային խմիչքներով, հրուշակեղենով, ծխախոտով, օճառով, մակարոնով, երշիկների արտադրությամբ, յուղով, պանրով և այլ մթերքներով:

Հայաստանում թեթև արդյունաբերության ձեռնարկությունները սկսել են կառուցվել Սովետական Իշխանության հաստատման առաջին տարիներից: Մեկը մյուսի հետևից աճեցին մանվածքեղենի ֆաբրիկաները, Գործվածքեղենի կոմբինատը, գուլպա-տրիկոտաժ ֆաբրիկաները, Մահուդի ֆաբրիկան, Խրոմպիկ գործարանը, սանձափոկի, կաշվի, կոշկեղենի, մետաքսյա արտադրանքը և բազմաթիվ ուրիշները:

Սովետական Հայաստանի ձեռնարկությունները արտադրում են բազմատեսակ արտադրություններ ո՛չ միայն ռեսպուբլիկայի կարիքների համար, այլև արտահանում են այլ ռեսպուբլիկաներ: Նրանք այժմ արտադրում են կենցաղային կարիքների համար անհրաժեշտ այնպիսի առարկաներ, ինչպիսին են՝ մահճակալը, ժամացույցը, հեծանիվը, ալյումինի և ճենապակյա ամանները,

բամբակյա և մետաքսյա գործվածքները, գորգերը, կոշիկները, սենդամբերքները և այլն:

Հնարավոր չէ մի հոդվածում արտացոլել

ՏՐԱԿՏՈՐՈՎ ՎԱՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆԻ ԴԱՇՏԵՐՈՒՄ

որակական հսկայական այն տեղաշարժը, որը կատարվել է Հայաստանի արդյունաբերության մեջ: Ակամա ստիպված ես դիմել թվերին, որովհետև նրանք ավելի խտացված ու ավելի գունեղ են խոսքերից: Ահա՛ մի փաստ. հետպատերազմյան հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում կառուցված է ավելի քան 50 նոր արդյունաբերական ձեռնարկություն, ընդարձակված և վերակառուցված է 27-ը: Արդյունաբերության ընդհանուր արտադրանքը ավելացել է երկուսից ավելի անգամ, իսկ ինքը՝ հնգամյակը, կատարված է ժամանակից շուտ: Եվ եթե հախապատերազմյան հնգամյակում արդյունաբերական արտադրանքը ավելացել էր 15 անգամ, ապա 1949 թվին, 1940 թվի համեմատությամբ, արդյունաբերական արտադրանքի բողարկումը ավելացել է 215 տոկո-

սով: Այս թվերը վկայում են մեր երկրի հսկայական հնարավորությունների մասին, վիթխարի այն հաջողությունների մասին, որոնց սպասում է նրա մոտակա տարիների զարգացումը: Խաղաղ աշխատանքի յուրաքանչյուր տարին բերում է տասնյակ անգամներ ավելի մեծ հաջողություններ:

Հսկայական են հայ ժողովրդի ստեղծագործական աշխատանքի հաջողությունները: Ծանր է Հայաստանի աշխարհագրական դիմապատկերը, բայց առաջին անգամ նա շնորհակալ ծառայություն մատուցեց աշխատավոր ժողովրդին, որը բնությունը ենթարկել է իր ուժին և կամքին: Եթե անցյալում խորը կիրճերով բաբնված փոքրիկավազ գետերը և բարձր, լեռնային ջրավազանները, ծածկելով իրենց հարստությունը, խոշընդոտ էին հանդիսանում գյուղատնտեսության զարգացման համար, ապա այժմ, գիտությամբ և առաջավոր տեխնիկայով զինված մարդը ենթարկել է նրանց իրեն և հարկադրել է ծառայել իր նպատակներին, տալ ժողովրդական տնտեսության զարգացման համար անհրաժեշտ էներգիա:

Բարձր լեռների վրա ծփում էր կապույտ Սևան լիճը: Հայաստանի մարգարիտն էին կոչում նրան: Պոետները իրենց բանաստեղծությունների մեջ երգում էին լճի մռայլ գեղեցկությունը: Թեպետև նա մարգարիտ էր, բայց գեղեցկացնում էր թերասնուցումից հյուծված և հոշոտված թշվառի կուրծքը, ուստի և ինքն ու իր գեղեցկությունը փայլում էին աննպատակ: Եվ մի՞թե կարելի՝ այրը կարող էր բարձր գնահատել իր փայլուն զարդարանքները, երբ մարում էին իր սոված երեխաների աչքերը: Մի՞թե նա ուրախությամբ չէր տա նույնիսկ իր սառը, շտաքացնող զարդարանքները, միայն թե բավարարության ժպիտով սկսի փայլել իր բախտավորված երեխաների դեմքը:

Սովետական Հայաստանը անուշադիր չգտնվեց Սևանի նկատմամբ: Գիտականորեն մշակվեցին միջոցառումներ, որպեսզի Սևանի ջուրը ոռոգի անջրդի տարածությունների հողերը, որպեսզի հզոր բազա դառնա արդյունաբերության համար, որպեսզի երկրի վրա փայլի պայծառ լույսը և ուրախալի օրեր գան ժողովրդի համար:

1926 թվին, Երգեսի կառուցումից հետո, մեկը մյուսի հետևից կառուցվեցին Լենինականի, 2-րդ Երգեսի, Զորագեսի, Իջևանի, Մեղրու, Շաքիի, Գորիսի, Միկոյանի, Քանաքեռգեսի և այլ հիդրոկայանները: Արդեն 1945 թվին ռեսպուբլիկայի էլեկտրահոսանքի արտադրությունը 85 անգամ ավելի էր նախահեղափոխական Հայաստանի էլեկտրոէներգիայի արտադրության ատիճանի համեմատությամբ:

1949 թվին գործող կայանների շարքը մտավ ստորերկրյա Սևանի լճային գեսը, իսկ նրան հաջորդեցին մի շարք շրջանային և գյուղական հիդրոկայաններ: Նրանք ոչ միայն էլեկտրահոսանք են մատակարարում արդյունաբերությանը և բավարարում քաղաքացիների կենցաղային կարիքները, այլև էներգիա են տալիս կոլխոզների ալրաղացներին, էլեկտրակիր և էլեկտրախուզող մեքենաներին, կոլխոզային սղոցարաններին, կալսիչներին և այլ մեքենաների:

Որքա՜ն շատ ջերմություն և ուրախություն բերեցին և՛ քաղաքի և՛ գյուղի աշխատավորությանը Սևանի ջրերը, լեռնային գետերի ջրերը:

Ճանաչելու ատիճանի փոխվել են Հայաստանի գյուղերը և քաղաքները, իսկական ոսկեդարն է ապրում նրա կուլտուրան: Չկա այնպիսի գյուղ, նույնիսկ ամենահեռավոր անկյունում, որտեղ չլինի դպրոց, գյուղական ակումբ, գրադարան, շարժական կինո: Մասսայական դպրոցներում սովորում են ավելի քան 302.000 երեխա: Գործում են բանվորական և կոլխոզային երիտասարդության հարյուրավոր միջնակարգ դպրոցներ, տեխնիկումներ և ուսումնարաններ: 14 բարձրագույն ուսումնական հաստատություններ և երեք հեռակա ինստիտուտներ մասնագետներ են պատրաստում ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր ճյուղերի համար: Սովետական Հայաստանը դարձել է ոչ միայն համատարած գրագիտության, այլ և բարձր զարգացած գիտության, արվեստի երկիր:

Վերածնված ժողովրդի պայծառ և բազմապիսի կյանքն իր մարմնացումն է գտնում նրա շնորհալի երաժշտագետների, նկարիչների, արձանագործների, պոետների պայծառ և բերկրալի ստեղծագործությունների մեջ: Արվեստի նոր տաղանդավոր կադրերը աճում են Կոնսերվատորիայում, Գեղարվեստական ինստիտուտում, Թատերական ինստիտուտում:

Համարձակ առաջ են քայլում մեր գիտնականները, որոնց հայտնագործություններից շատերը դուրս են գալիս ռեսպուբլիկայի շրջանակից ավելի հեռուներ և ունեն համաշխարհային նշանակություն. այսպիսին են աստրոֆիզիկայի և կոսմիկական ճառագայթների ասպարեզի աշխատանքները: Միության եղբայրական ռեսպուբլիկաներում ներդրվում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի աշխատանքները՝ հավաքական կոնստրուկցիաները բարձր կառուցումների

համար, բժշկական պրեպարատների ասպարեզում և այլն:

Սովետական Հայաստանում աշխատում են 742 գիտական աշխատողներ, որոնց

ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐՈ-ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԻ ԲԱԺԻՆԸ

թվում 198 գիտության թեկնածու և 77 գիտության դոկտոր: Գիտնականների այդ ջոկատը կատարում է այնպիսի՛ աշխատանքներ, որոնք ունեն հսկայական նշանակություն ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության համար. ուսումնասիրում են ռեսպուբլիկայի խորը ընդերքը, շինարարական նոր նյութերը, ստեղծում են նոր կոնստրուկցիաներ լեռնային և նախալեռնային շրջանների համար, բարձրաբերք ցորենի և այլ հացաբույսերի նոր տեսակներ, պտղատու ծառերի նոր տեսակներ, տեղական պայմաններին ընտելացված բարձր մթերատու անասուն, ուսումնասիրում են իրենց երկրի պատմությունը և հնագիտությունը:

Ամբողջովին փոխվեց հայ ժողովրդի հա-

կատագիրը: Եթե առաջ հայ գյուղացին, հայ աշխատավորը վաստակ փնտրելու համար հարկադրված էր թողնել իր սովամահ ընտանիքը և մեկնել հեռավոր ու օտար երկրներ, ապա այժմ նա ապահովված է և՛ աշխատանքով, և՛ հացով, և՛ մսով: Նրան հարկավոր չէ իր բարեբեր երկրից ոչ մի տեղ գնալ: Տեղի է ունեցել հակառակ երևույթ. նա բաց է արել դռները հազարավոր ներգաղթողների առաջ, որոնք պանդխտությունից վերադառնալով Հայրենիք, գաղթականի իրավազուրկ և արհամարհված վիճակից բարձրացել են լիիրավ սովետական քաղաքացու դրության:

Ուրախության և հպարտության մեծագույն զգացմունքով է համակվում հայրենասեր մարդը, երբ լինում է Այրարատյան դաշտավայրում, Զանգեզուրի և Լոռիի քաղաքներում և գյուղերում, հին Շիրակում... Ամենուրեք նա հանդիպում է ծաղկող, տարեցտարի բարեկարգվող քաղաքների, գյուղերի, վարդագույն տուֆից կառուցված գեղեցիկ շենքերի, տնկված մատղաշ այգիների ու անտառների և գեղեցիկ ճարտարապետական աղբյուր-հուշարձանների, որոնք պատմում են ո՛չ թե հեռավոր անցյալի ահեղ պատմությունը, այլ Սովետական Հայրենիքի նկատմամբ ժողովրդի ունեցած անձնազոհ սիրո մասին, Հայրենական Մեծ պատերազմում հերոսաբար ընկած Հայրենիքի խիզախ մարտիկների մասին:

Եվ ամենուրեք լսվում է աշխատանքի ուրախ սիմֆոնիան, հնչում է երջանիկ մարդկանց հրճվանքի ձայնը, որոնք վստահ են իրենց ապագայի նկատմամբ, որոնք իրենց սեփական ձեռքերով ղեկավարում են իրենց բախտը և ծարավի են միայն մի բանի— ոչի՛նչ, ո՛չ մի անսպասելի բան չընդհատի նրանց խաղաղ, ստեղծագործ աշխատանքը:

Իսկ այդ ծաղկուն երկրի կենտրոնում, ինչպես ներվերի կենտրոն, որը ղեկավարում է երկրի կենսական պրոցեսները, գտնվում է նրա գեղեցիկ մայրաքաղաքը՝ Երևանը: Այստեղ, ինչպես լուսանկարչական ապակու վրա, արտացոլվում են իր երկրի և ժողովրդի ճակատագրի մեջ տեղի ունեցած վիթխարի տեղաշարժերը:

Գեղեցիկ, հովասուն խճուղով դուք բարձրացեք Քանաքեռի բարձունքը և վերևից դիտեցեք ներքևում տարածված Երևանը: Ձեր առջև կփռվի լայնածավալ քաղաքի հրաշալի պատկերը, որը գնում է դեպի խոր, կարծես թե ձգտում է հասնել և միանալ սպիտակափառ Մասիսի փեշերին: Նայեցե՛ք գիշերն և ձեզ կթվա, որ աստղազարդ երկինքը պոկվել և իջել է ներքև, որպեսզի տարածվի Այրարատյան հարթավայրի լայնարձակ տարածության վրա: Այստեղից, բարձունքից, պարզ երևում են նրա լայն և երկար պողոտաները, ուղղաձիգ փողոցները: Ինչպես լեռնային օդում, հայելու մեջ, արտացոլում են նրա վարդագույն տների և պուրակների անվերջանալի շարանները:

Երևանն աճում է աներևակայելի արագությամբ: Հինգ տարի առաջ այստեղ եղած մարդը ակամա կանգ է առնում տատամսած և ամեն մի քայլափոխում, չճանաչելով փողոցը, ամենուրեք հանդիպելով տարեցտարի ավելի լավացած ճարտարապետական կոթողների, նոր մոնումենտալ շենքերի, նոր փողոցների և զբոսապուրակների: Վարդագույն, դեղին, բաց դեղին, հասմիկագույն տուֆի փափուկ երանգները ստվերավորվում են ծառերի վառ կանաչով, որոնք տնկված են փողոցների և պողոտաների երկու կողմերում:

Երևանի կոմպոզիցիոն կենտրոնը հանդիսանում է Լենինի հրապարակը, որն այս տարի ընդարձակված է գրեթե կրկնապատիկ չափով:

Կուլտուրայի տան նորակառույց ճակատը, որ նորերս երեսպատված է սպիտակափայլ քարով, արտացոլվում է հրապարակի նոր ջրավազանի հայելային ջրի մեջ: Երկու կողմերից նրան եզրապատում են պալատները, իսկ կուլտուրայի տան դիմաց բարձրանում է Լենինի հուշարձանը:

Լավ մտածված պլանով են պատրաստված Այգեստանի փողոց-այգին, քաղաքի գեղեցկագույն մագիստրալներից մեկը՝ Բաղրամյանի փողոցը, որը ձգվում է դեպի Քանաքեռի սարահարթին աճած ու քաղաքին միաձուլված Արաբկիր ավանը, Լենինի նոր պողոտան, Օրջոնիկիձեի պողոտան, Բերիայի փողոցը, միանգամայն նոր շինված Ամիրյան փողոցը և շատ ուրիշները: Բարեկարգված են Ստալինի և Միկոյանի պողոտաները: Հին խղճուկ շենքերն իրենց տեղը ամեն օր զիջում են նորերին: Ատամնավոր էքսկավատորներն ամեն օր կրծում են հին շենքերի ծռմռված պատերը, որպեսզի այդ խղճուկ հյուղերն իրենց տեղը զիջեն հպարտ բարձրացող նոր շենքերին:

Ամեն օր ավելի պարզ ու որոշ է պատկերվում մայրաքաղաքի դեմքը՝ իր չկրկնվող ազգային երանգավոր ճարտարապետությամբ, որն իր մեջ համատեղում է հին հայկական ճարտարապետության բոլոր լավագույն տրադիցիաները՝ աղեղնաձև կամար, կրկնասյուն, քանդակած կարնիզ՝ կատարված բարձր վարպետությամբ — մի քաղաք, որն ունի բարձր զարգացած արդյունաբերություն, ծաղկուն գիտություն և արվեստ:

Իսկ քաղաքի վերև, սարալանջի վրա, խո-

յանում է «Հաղբանակի մոնումենտ»ը, որն իր պարզ և հասարակ ձևի հմայիչ գեղեցկությամբ և բարեազնիվ համաչափությամբ հանդիսանում է հայ նորագույն ճարտարապետության գլուխ գործոցը: Մուգ տուֆի 34 մետր բարձրությամբ պատվանդանի վրա բարձրանում է Ստալինի մունումենտ-քանդակը կռած պղնձից՝ 16,5 մետր բարձրությամբ: Նա բարձրանում է որպես քարի և պղնձի վրա դրոշմված ժողովրդի հիմնը իր

ՄԻ ՏԵՍԱՐԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՓՈՂՈՑԻՑ

Առաջնորդին և լավագույն բարեկամին, իրեն համար երջանիկ կյանք ստեղծողին, որը պաշտպանում է նրա խաղաղ աշխատանքն ամեն տեսակ վտանգներից:

Սովետական Հայաստանի այս հսկայական վերելքը տեղի է ունեցել 30 տարիների ընթացքում, ընդամենը 30 տարում: Ժողովուրդների կյանքում այդ ժամանակը ավելի փոքր է, քան ակնթարթը, բայց հայ ժողովրդի կյանքում այդ ավելի է, քան նախորդ բոլոր դարերը միասին առած:

Ո՞ր գիտակից հայրենասեր հայ մարդը, տեսնելով իր Հայրենիքի այս վիթխարի զարգացումը, չի ուրախանա, երախտագիտական զգացմունքով չի լցվի դեպի սովետական հրաշագործ սերունդը և նրա տաղանդավոր ղեկավարները:

ԱՅՍ ԲՈԼՈՐԻՑ ՀԵՏՈ ՀԱՐԿ ԿԱ՞ ԱՍԵԼՈՒ, ԹԵ ԻՆՉՈՒ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ, ՈՐ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ Է ԵՂԵԼ, ԱՊՐԵԼ Է ՆՐԱ ՏԽՈՒՐ ԵՎ ՈՒՐԱԽ ԿՅԱՆՔՈՎ ԵՎ ԴԱՐԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ ԱՂՈԹԵԼ ՆՐԱ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԻՐ ՍԻՐԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ ՊԻՏԻ ԼԻՆԻ: